

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՎԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԱՆՑ ԱՄՑԻԱՑԻԱ

**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ.  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ  
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

*Սիջազգային խորհրդաժողովի նյութեր  
Ծաղկածոր, 1999, հունիս*

Երևան 1999

Հասցեատրվածից Կրթությանը Կապված Անուշահայրենի

ԵՊՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԵՎ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՍՏՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՅԿՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

«ԽՆՆԱՊՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՆԱԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»

ԺՈՂՈՎՈՒՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՆԱԿՆԵՐԻ

ԵՐԿԻՍՈՒԹՅՈՒՆ»

ՄԻՋՁՅԱԿԻՆ ԽՈՐՀՐԱԾՈՒՄՎԻ ԿՈՒՈՒՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ Ջեննա Հատրաթյան

Հայերեն տեքստի խմբագիր՝ Կլարիսիկ Բաղդասարյան

Ռուսերեն տեքստի խմբագիր՝ Մարինա Սահակյան

Անգլերեն տեքստի խմբագիր՝ Կլարիսիկ Օսիպով

ԽՆՆԱՊՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՆԱԿՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՎ ՄՇԱԿՆԱԿՆԵՐԻ ԵՐԿԻՍՈՒԹՅՈՒՆ: Համալսարանական կրթու-

թյամբ կամանց ասոցիացիա, 1999, 408 էջ:

Կրթում ներկայացված են ՄԱԿ-ի կողմից հասարակության մշակույթի տարի նախատեսված 2000 թվականի նախաշեմին Օստիանոյի (Հայաստանի Հանրապետություն) Համալսարանական կրթության կամանց ասոցիացիայի կազմակերպված «Հասարակության մշակույթ. ժողովրդավարություն և մշակույթների երկխոսություն» միջազգային խորհրդածրոյի նյութերը:

Հասարակության մշակույթի նախնական քաղաքական քննարկ է պարունակում ներկայացված հիմնահարցերի լայն շրջանակը: Հեղինակները բնութային են ամեն ինչ հասարակության մշակույթի որպես բարոյական արժեք, բարոյական անհատական փոփոխություններում և որպես կամենալի մշակույթ, գեներացիան համարում են կրթությունը որպես ժողովրդավարության հիմք, երկխոսությունների ակտիվացում և ժամանակակից տեխնոլոգիաները, ժողովրդավարության ինտելեկտուալ փոփոխությունները՝ իշխանություններին և ՋԼՄ-ների փոխգործակցությունները, հասարակական կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները, հասարակական կազմակերպությունները:

Կրթության մշակույթում է հասարակագետներին, հասարակական կազմակերպություններին, իրենց կրթության, ոլորտի անտարբեր չեն արդի Հայաստանում ժողովրդավարության և խորհրդային խնդիրների նկատմամբ:

© Համալսարանական կրթությամբ կամանց ասոցիացիա

# CULTURE OF PEACE: DEMOCRACY AND DIALOGUE OF CULTURES

Materials of International Conference  
July, 1999, Tsakhkadzor

Yerevan 1999

Хрестоматийная истина гласит, что демократия, хотя и является *прав- лением большинства*, но при *непрерывном соблюдении прав и защиты законных интересов меньшинств*.

Пока женщины составляют «меньшинство» (несмотря на то, что чис- ленно они превосходят мужчин, но социальная и политическая статистика отличается от демографической), следует принять все необходимые меры по защите их прав, повышению их социального статуса и значимости. Са- мый «прямой» способ – это введение системы квот для обеспечения адек- ватного представительства (и присутствия) женщин в Парламенте, в орга- нах государственного управления на всех уровнях и т.п.

**Наша политическая элита еще не готова к таким «радикальным», на их взгляд, мерам.** Но это вполне может стать стратегической целью для женских организаций, как, впрочем, и для других общественных организа- ций (в первую очередь, правозащитных), которым небезразлично гендер- ное равноправие. Суть неравенства между мужжиной и женщиной в боль- шинстве сфер не природное, а социальное, оно – навязано обществом и сво- дится в сущности к вопросу о власти и контроле.

Каждый человек волен иметь и пропагандировать любые незапрещен- ные законом идеи, в том числе о «природе» неравенстве полов. В совре- менном обществе, однако, уже сложно заниматься подобной демагогией, обвиняя во всем «чуждый нам» и «идущий с Запада аморальный либера- лизм», когда хорошо известно, что двойные стандарты, навязывание собст- венных стереотипов всем остальным под видом общенациональных тради- ций, общественный контроль над личной жизнью женщины и жандарм- ские функции публичной морали – наследие патриархального и патриар- хального общества, которое трудно согласуется с принципами демократи- ческого устройства современного общества.

Нашему обществу предстоит еще пройти значительный путь, чтобы до- стичь гендерного равноправия. Для этого нужно будет изменить многие традиционные представления и стереотипы, сложившуюся практику скры- той и явной дискриминации и преодолеть инерционность менталитета и активное сопротивление тех, в чьих интересах гендерная асимметрия.

9. Там же имеется один общий фактор, поддерживающий гендерное неравенство в различ- ных культурах, – отмечает Наила Кабир, – то это – сведение женщины к ее телу и одновре- менная трактовка этого тела и, следовательно, самой женщины как чего-то неполноценного». Кабир, N. "Selective rights, collective wrongs". *Index on Censorship*, London, 1995, N 4, p. 36.

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երեսնամյա պետական համալսարանի փիլիսոփայության  
և տրամաբանության ամբիոնի պրոֆ. Կարապետ  
ՀՀ կառավարության արհեստական ինտելեկտի  
և գրանցատարաբանության վարչության հասարակական  
կարծիքի ուսումնասիրության կենտրոնի գիտական  
խորհրդատու, փիլիսոփայական գիտությունների բնագծում

## ՔԱՂԱՔԱՅԻՆԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԿԻՍՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵԿԱՎՈՒՅԹ. ՀԱՄԱՁԱՅՆՆՈՂԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Տարբեր խնդիրների շուրջ բանակցությունները, կարծիքների պայքարն ու  
փրկակցությունը մարդկային գործունեության անկապտելի մասն են կազմում:

Ճանաչողության և պրակտիկ գործունեության ընթացքում տարակարծու-  
թյունների, հակասական տեսակետների երևում գալիս անխուսափելի են  
միանգամայն բնական երևույթ է կապված արտաքին աշխարհի որակական  
բազմազանության և հակասականության, ինչպես նաև մարդկանց անհա-  
տակալ տարբերությունների և շահերի բազմազանության հետ:

Կառավարների, բարոյ խնդիրների ու դրանց լուծման տարբերակների  
շուրջ մտորված համաձայնությունը ձեռք է բերվում տարբեր տեսակետների  
ստատրան, թե՛ր ու դե՛ս փաստարկների վերհանման, բնաբերկունների, հասա-  
րակական, քաղաքական երկխոսությունների, նաև պայքարի ու մրցակցու-  
թյան ճանապարհով:

Մեր ժամանակներում բարոյ հարցերի համակողմանի բննարկումները, հա-  
սարակական-քաղաքական երկխոսություններն ու բանակցությունները, հրա-  
պարակային բանավեճերը որպես դրանց լուծման, համաձայնության ուղիներ-  
ի մշակման նախընտրելի և ընդունված ձևեր բախանցել են կյանքի ամենա-  
ստարիք, անգամ ավանդաբար պահպանողական համարվող բնագավառնե-  
րը: Զանգվածային լրատվության միջոցները հեղեղված են գաղափարական,  
լրատվական, տնտեսական, իրավական ու մշակութային բեժ վիճարանու-  
թյուններով, ամենամարտնչական տեսակետների արտաբանում ու բախման կարելի  
է տեսնուտես լինել միտիցներում ու համբախակաբներում:

Մեկմյա մտախոր արտաստակածությունից, հոգեկան խանգվածքից ու  
համրոններից հանգստանների բերումով վիճում են բոլորը: Քչերն են, սա-  
կայն, հետոտո սոյո բերաբոյում իրենց վարքագծին, մտածում իրենց գործելա-  
կերպի, հարրարակցիլլու Լոյսնակների կատարելագործման, առավել արդյու-  
նավետ մեթոդների ու սկզբունքների մտախն:

Երեսնամյա պետական համալսարանի հումանիտար ֆակուլտետների

ավարտական կուրսերի ուսանողների շրջանում անցկացված հարցման տվյալները վկայում են, որ իրենց «վճռող» համաբաղմունքի եւ վեճերից չխուսափողների (հարցման մասնակիցների ընդհանուր թվի 47,5%-ը) 73,7%-ը արտոս վատկերացում ունի կամ ընդհանրապես ծանոթ չէ վիճաբանության կանոնների եւ արդյունավետ հարորդակցման սկզբունքներին:

Մինչդեռ տարապարտություններ առաջ բերող հարցերի շուրջ համաձայնության եւ ընդհանուր մտտեցումների մշակման առումով էապես կարելու է ճիշտ հարորդակցման, գործնական ու կառուցողական երկխոսություն վարելու սկզբունքների որպես համաձայնողական գործուն տեխնոլոգիաների կիրառումը: Բազմաթիվ են այդ կանոններն ու սկզբունքները: Դրանք վերաբերում են ինչպես երկխոսության տրամաբանությանն ու կառուցվածքին, բարոյախոգեբանական, գերազիստական կողմերին, այնպես էլ գործընթացի կազմակերպման, արարողակարգի ու վարվեցողության սկզբունքներին:

*Ստանդորդյան որոշակիությունը, անհասկանալիությունը, հետեւորականությունն ու հիմնավորվածությունը,* նվազագույն պահանջներն են, որոնք հարորդակցման ու փոխըմբռնման գործընթացը դարձնում են դյուրին եւ նպատակային:

Երկխոսությունն ու բանակցությունները արդյունավետ հունով տալնուր առումով առանցքային նշանակություն ունեն մասն հետեւյալ գործոններով:

1. *Կողմերի իրազեկությունը քննարկվող հիմնահանրի շրջանակներում:* Առանց խտասկողության նյութի մեջ կողմերի իրազեկության հնարավոր չէ գործնական քննարկում սկսել: Իսկ եթե այն սկսվի էլ, կվերածվի դատարկ, առարկայագործ շատախոսության:

2. *Անհրաժեշտ է վիճարկվող հարցի ու դրույթի հստակ, պարզ, հասկանալի ու ոչ երկիմաստ արձանագրում եւ դրա շուրջ խտասկողության «ֆոկուսացվածություն»:* Այս պահանջների բավարարումը հնարավորություն է տալիս խտասկողու բազմաթիվ բյուրիսացություններից, դատարկ բանակրկներից ու ինաստարկություններից: Իրողություններ, որոնք ամենեւին էլ հազվադեպ չեն մեր իրականության մեջ:

3. Փոխըմբռնման, գործնական քննարկումների առումով էապես կարելու է մասն *սեփական տեսակետն ու մտտեցումները ստույգ ձեակերպելու, ընդդիմախոսի առաջարկություններն ու փաստարկները ճիշտ հասկանալու եւ մեկնարկելու* պահանջը: Հարորդակցումն առանց փոխըմբռնման ուժերի եւ ժամանակի դատարկ վատնում է: Չի կարելի մասն հասկանալորդին վերազրել այնպիսի դրույթներ, որոնք նա չի առաջադրել ու չի պաշտպանում: Այդ առումով ուշագրավ է հին հնդիկների փորձը: Վիճարկանողը նախ վերապատմում, վերաշարարում էր ընդդիմախոսի առարկությունը եւ շարունակում վեճն այն իսկպում, երբ ընդդիմախոսը հաստատում էր, որ գրուցակիցը ճիշտ է հասկանցիկ իր ասածը: Նշված տեսանկյունից կարելուրվում է գրուցակցի գործողու-

բյուրների, վարքի ու արտահայտությունների իրական շարժառիթների մեջ խորամուխ լինելու կարողությունը, ինչը թույլ է տալիս ավելի լավ, ավելի խորը հասկանալ ու ըմբռնել նրա դրույթներն ու դատողությունները:

4. Տարակարծություններ առաջ բերող հասարակական, քաղաքական խնդիրների շուրջ կայուն համաձայնություն մշակելու ծանրակշիռ սկզբունքների ու պայմանների շարքին պետք է դասել *հակասար անվտանգության՝ փոխադարձ հարգանքի, բարոյական եւ իրական հակասարության ու պաշտպանվածության, սեփական տեսակետի համար չհետապնդելու երաշխիքները:* Անհավասար պայմանները, հարկադրանքի առկայությունը, կործնից մեկի կաշկարվածությունը երկխոսության ընթացքում ստեղծում են քերականության ու լարվածության (քեկուզեւ ներքին) մթնոլորտ եւ լավագույն դեպքում հանգեցնում են միայն արտաքին, ֆակցյակ, առերես համաձայնության, որը կարող է խախտվել իրավիճակի ցանկացած փոփոխման հետ միասին: Այդպիսի մտտեցումները պետք է հնարավորինս բացառել հասարակական եւ քաղաքական խնդիրների շուրջ բանակցությունների ընթացքում՝ ելնելով դրանց իսկ լուծման, տեսական, կայուն համաձայնության մշակման շահերից: Փորձը վկայում է, որ մարդկային գործունեության տարբեր բնագավառներում դա լինի գիտություն, քաղաքականություն, արդատաբանություն, թե արվեստ, պարտադրված «համաձայնությունը», որպես կանոն, ունենում է շատ ավելի անցանկալի ու վտանգավոր հետեւանքներ, քան տեսակետների բացահայտ արտահայտումը, դրանց պայքարն ու մրցակցությունը:

5. Արդյունավետ բանակցություններ վարելու գրավականներից մեկն էլ *քննարկվող հիմնահանրի ոչ միայն սեփական շահերի եւ ոչ միայն ընդդիմախոսի, այլեւ չեզոք ու անվանիակալ տեսանկյունից վերլուծելու կարողությունն է:* Եթե երկխոսության ժամանակ կողմերից յուրաքանչյուրը երեւույթներն արժեքավորում ու ներկայացնում է միայն սեփական տեսանկյունից՝ չփորձելով հասկանալ ու ընկալել դիմացինի տեսակետը, երբ դիրքորոշումները լինում են կրոյտ ու անգիջում, ապա խնդրի կառուցողական քննարկման եւ երկուստեք ընդունելի լուծումներ գտնելու մասին խոսելն իսկ ավելորդ է: Նման իրավիճակ էր ստեղծվել 90-ական թվականներին ծայր առած չեչենական իրադարձությունների շուրջ, երբ ռուսական իշխանությունները չեչենների պայքարը համարում էին բրեւական տարրերի արկածախնդիր պատերազմ օրինակյան իշխանությունների դեմ եւ լստ այդմ հիմնավորում սեփական գործողությունները, իսկ չեչեններն իրենց պայքարը համարում էին ազատագրական պատերազմ: Այդպիսի դեպքերում էլ չեզոքության գործոնը եւ տեսակետներում ընդհանուր եզրերի որոնման դաշտը ապահովում են միջնորդի դերում հանդես եկող կազմակերպություններն ու կառույցները:

6. Երկխոսության հայտությունը շատ բանով կախված է *մասնակիցների տակադից եւ չափի գզացումից:* Ընդդիմախոսի դրույթների ճշմարտացիության

հնարավորությունն ընդունելու կեցվածքը, փոխադարձ զիջողությունների պարտադրականությունը ոչ միայն շրջում են բնորոշմախտի ինքնապիտույունը, այլև նրան դրոսն են նույնպես «ներմելու» սեփական դիրքորոշումը՝ գգալիորեն հարթախարելով հոգեբանական արգելքները: Խոսքն, իհարկև, ավելորդ զիջողականության մասին չէ: Կատարողական երկխոսության հիմնական պահանջներից մեկը պետք է լինեն *փաստարկների սկզբունքայնությունն ու խոսքերի արտահայտությունների մեղմությունը:*

7. *Փոխադարձ հարգանքն ու հանդուրժողությունը* արդյունավետ երկխոսության, փոխըմբռնման, խնդրի վերաբերյալ եղած հավասարակա տեսակետների ըստ էության բննարկման և ընդհանուր մտեցումների մշակման կարևորագույն գրավականներից են: Տրուցակցի և նրա գաղափարների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը արդարացված է ինչպես մտավոր, բարոյական, իրավական, աշխարհայացքային, գաղափարական հավասարության, այնպես էլ ինացարանական տեսանկյուններից:

8. Երկխոսությունն աշխուժացնելու, լարվածությունը փքցաթափելու, բարդ ու խճճված իրողությունները դիպուկ բնութագրելու գործել միջոց է *հունորի և սրանոտության ընճռած հնարավորությունների* օգտագործումը: Երբեմն կատակը ծառայում է իբրև ուղեկից այնպիսի ճշմարտությունների, որոնք առանց դրա տեղ չէին հասնի: Ընդլինմախտի բերություններն ու սխալները բացահայտելիս սովորաբար չափավոր հունորն ավելի նախընտրելի է, քան ծանձրալի մեկնաբանություններն ու բարոզները: Պետք է խուսափել, սակայն, հունորը հեզմանքի ու բացահայտ ծաղրի վերածելուց: Ծաղրը անուսակտություն, մտքի աղքատություն նշան է և սովորաբար գործի է դրվում, երբ չկան սղանաբանական ապացույցներ:

Արդյունավետ երկխոսության կարևոր համար փոխըմբռնմանն ու համաձայնության մշակմանը նպաստող նորմերի ու սկզբունքների ինացությունը և գործնականում դրանց կիրառումն, իհարկև, կարևորագույն պայման են, սակայն պակաս կարևոր չէ նաև կյանքում այդ *նորմերից կատարվող շեղումները*, մերօրյա հասարակական, քաղաքական բանակցությունների ու բանավեճերի ընթացքում առավել հաճախ հանդիպող *ստիեստությունների, անբույր լատրելի հնարքների ինացությունն ու դրանցից խուսափելու հնտությունների մշակումը:*

Դրանց ինացությունը կարևոր է նաև տեղեկատվության անընդհատ աճող և հավասարակա հոսքում կողմնորոշվելու, իրատարծությունները ճիշտ հասկանալու և գնահատելու համար:

Ոչ հեռու անցյալում, օրինակ, տեղեկատվական հեղինակավոր ծառայություններն ու լրատվամիջոցները, անդրադառնալով հարավարական տալուստայթանում ծայր առած իրատարծություններին, հաճախ էին խտտում «սկյուր-մուտուրմանական» հակամարտության մասին: Իրատարծություններն

այդ ձևակերպմամբ էին վերլուծում նաև քաղաքական մեկնաբանները: Իհարկև, փոքր-ինչ հետեուրական ունկնդիրը կարող էր նկատել ձեռակերպման գավեշտակամությունը: Միանություն կլինեք կարծել, քե սերբերը մարտահրավեր էին նետել կամ հակամարտում էին մուտումանների դեմ ընդհանրապես: Դա նման էր նրան, որ սանին, քե կանայք լինում են բարձրահասակ, շիկահեր և բոշակատու, և որ շիկահերները չեն սիրում բարձրահասակներին: Հակամարտության կողմերն, իհարկև, ի վերջո հստակեցվեցին լրատվամիջոցների կողմից, երբ այն արդեն վերածվել էր արյունալի պատերազմի:

Երբեմն երկխոսությունն ու բանակցությունները, սկսվելով մի որեկից խնդրի բննարկումով, *վերածվում են որեւէ առանձին փաստարկի կամ ինչ-որ մասնավոր մտքի շուրջ մղվող վեճի:* Հետո կողմերը սկսում են միմեկ մի երրորդ խնդրի շուրջ: Եվ այդպես շարունակ: Պատահում է նաև այնպես, որ վիճուղենը թժվարանում են հիշել, քե ինչից սկսվեց վեճը:

Հասարակական, քաղաքական երկխոսությունների ընթացքում հաճախ կատարվող սխալ է դրան համապատասխան տիեստություն է *բննարկվող հարցի դրույթի ակասն կամ մուտված նենգափոխումը:* Դա կարող է կատարվել մասնակիորեն կամ էլ կրել ուղղակի խափանարար բնույթ:

Օրինակ՝ իշխանությունները մեղադրում են տվյալ քաղաքական ուժին բրեական գործելակերպի մեջ: Վերջին տրամաբանական մտեցման և կատուցողական կեցվածքի պարագայում լավագույն դեպքում պետք է որ մերադրող կողմից ծանրակշիռ ապացույցներ պահանջներ և դրանք բացաբայություններ կամ ծայրահեղ դեպքում փորձեր հերքել ներկայացված ապացույցները և փաստարկները բերել իր արդարացիության օգտին: Սակայն մեատարվող կողմը, խույս տալով ներկայացված կոնկրետ մեղադրանքներից, առաջարկում է հետելյալ դրույթը. իշխանություններն իրավունք չունեն մեդարդելու տվյալ քաղաքական կազմակերպությանը, որովհետև ընտրվել են ոչ սահմանադրական ճանապարհով: Ինչպես հաճախ է պատահում, հասարակական, քաղաքական երկխոսությունների մշակույթի չձեակերպվածության պայմաններում այդպիսի հնարքները որոշակի տպավորություն են գործում հասարակական կարծիքի վրա՝ ամենեին էլ չհանգեցնելով ոչ խնդիրների լուծմանը, ոչ էլ բնականաբար, գործնական երկխոսության:

Ինչպես քաղաքականության բնագավառում, այնպես էլ հասարակական տարբեր խնդիրների շուրջ ծավալված երկխոսությունների ու բանակցությունների ընթացքում բավական հաճախ է գործում այսպես կոչված *ուժի փաստարկը:* Դրա դրսևորման սպեկտրը լայն է. սկսած ուղղակի սպառնալիքներից, վերջացրած անցանկալի, տեհած հետեւանքների մասին նուրբ ու անուղղակի ակնարկներով:

Այդպիսի փաստարկները հաճախ անկասելի են և գործում են բավական

«համովչ»՝ ստիպելով ընկրկել ու ստերեն համաձայնության գալ: Մասկայն առերես համաձայնությունը կրթեմն ավելի վտանգավոր է ու պայթյունավտանգ, քան բացահայտ մրցակցությունը: Նման «համաձայնողական տեխնոլոգիաների» կիրառումը, որ ենթադրում է ամհարզայից, չհանդերձող վերաբերմունք գրուցակցի նկատմամբ եւ գործում է հավասար անվտանգության սկզբունքի խախտմամբ, սովորաբար տալիս է միանգամայն հակառակ արդյունք, եւ պետք է ըստ ամենայնի բացառել հասարակական, քաղաքական գափտ խնդիրների լուծման կապակցությամբ համաձայնությունը մշակման նպատակով ծայր առած երկխոսությունների ու բանակցությունների ընթացքում:

Մերօրյա իրականությունը ուժի փաստարկների կիրառման բազում օրինակներ է տալիս: Քաղաքական ընդդիմախոսի հետ վիճարկման ընթացքում, չկարողանալով ըստ էության հերքել նրա գաղափարները եւ սպառնելով տրամաբանական փաստարկների պաշարը, մատնանշում են այդ գաղափարների վտանգավորությունն ու անցանկալի լինելը գործող ռեժիմի համար իշխանությունների հետ անախորժություններ ունենալու հնարավորության մասին ակնարկով փորձելով փակել նրա բերանը:

Սեկ այլ ընթացքում բանվորների ներկայացուցիչները գործարանի ադմինիստրացիայի հետ իրենց աշխատավարձի բարձրացման շուրջ բանակցությունների ընթացքում, սպառնելով ծառայողների սոցիալական դրության բարելավման անհրաժեշտության վերաբերյալ բոլոր փաստարկները, սակայն չկարողանալով որոշակի հաջողությունների հասնել, դիմում են վերջին միջոցին, հիշեցնելով, որ հակառակ պարագայում ծառայողները կարող են անժամկետ գործադուլ հայտարարել: Եթե ադմինիստրացիան էլ իր հերթին չկտրչեր ուժի դիրքերից պատասխանել՝ նշելով, թե ստանց այն էլ արտադրության ծավալների կրճատման պատճառով դժվար է մեծ թվով ծառայողներ պահելը, այնպես որ, գործադուլին կհետեւեն աշխատանքից հեռացումները, ապա ոչ միայն խնդրին լուծում չի տրվի, այլեւ նման «հանգուցալուծումը» կարող է ավելի սրել իրավիճակը եւ սկսված «երկխոսություն» իր շարունակությունը կարող է գտնել ոչ թե բանակցությունների սեղանի շուրջ, այլ փողոցներում:

Բանակցությունների կարևորագույն բաղադրատարրերից մեկը *նոգերանական գործուն է, հարդրակցման նոգերանական տեսանկյունները*: Հասարակական ու քաղաքական տարբեր մակարդակի շփումների ընթացքում կարելի է ակամատես լինել *նոգերանական ներգործության հասնար անբույսարեղի հնարքների*, որոնք ուղեկցվում են ընդունված բարոյաեռգրանցական նորմերի ու սկզբունքների խախտումներով, *հիմնված են մարդկային էության նուրբ կողմերի ու բուրյությունների ինացության եւ հնուտ աշխարհման վրա*:

Այդպիսի հնարքների շարքն են դասվում «*հոգու լնթերցումները*», երբ

անազնիվ գրուցակցից, մի կողմ թողնելով հակառակորդի դրույթների ու փաստարկների ըստ էության բննարկումը եւ «թափանցելով» նրա մտքի ու հոգու խորքերը, հրապարակում է այն «բաբնված շարժարթները», որոնք, ըստ իրեն, ստիպում են հակառակորդին պաշտպանել տվյալ տեսակետը, պայմանավորում են նրա կարքն ու գործողությունները: Օրինակ՝ «Ինքներդ էլ համոզված եք իմ իրավացիության մեջ, միայն չեք ցանկանում ընդունել Ձեր սխալը», «Այդպես եք խոսում, որովհետեւ Ձեզ լավ վճարել են», «Դուք պաշտպանում եք նրան, որովհետեւ ինքներդ էլ մասնակից եք նրա հանցագործ գործունեությանը»: Նման չիքննադրված հայտարարությունները հաճախ շփոթեցնում են հակառակորդին եւ «փակում նրա բերանը»: Որպես կանոն, դրանք հերքելը նույնքան դժվար է, որքան ապացուցելը:

«Հոգու ընթերցումները» առավել հաշվեմկատ ու անկյանելի են դառնում, երբ գուգորվում են ուժի փաստարկներով ու նման ակնարկներով (օրինակ՝ «Ձեր արտահայտությունների իմաստը պարզ է վարկաբեկել ուժային մայխալարությունները ու օգել դրանց հեղինակությունը»):

Էլ ավելի հաճախ «հոգու ընթերցումները» վերածվում են ուղղակի գրպարտության գուգակցվելով առի ու կեղծ փաստարկների հետ: Այդպիսի դեպքերում արդարանալու փորձ ամենը սովորաբար անօգուտ է, բացի այդ, անուղղակիորեն կարող է տպավորություն ստեղծվել, որ մերադրվող կողմը, թեկուզեւ տեսակամորեն, հնարավոր է համարում այդ մերադրանքների խելությունը, իսկ դա ամենին էլ նրա օգտին չէ: Խորհուրդ է տրվում պահանջել եւ պնդել, որ անազնիվ ընդդիմախոսն ամհապաղ ծանրակչիւ ապացույցներ բերի իր մեղադրանքներն ապացուցելու համար: Հակառակ դեպքում կարելի է հրապարակա մերկացնել նրա հայտարարությունների գրպարտական էությունը՝ դրանք շուտ տալով հենց հեղինակի դեմ:

Տարակարծություններ առաջ բերող բարդ խնդիրների բննարկումների ժամանակ պետք է ձեռնպահ մնալ ու զգուշանալ նաեւ «*շորթորթ փաստարկներ*»: Կեղծ դրույթը ներկայացվում է մշուշուտ, սուր անկյունները հարթած տեսքով, համաձայնություն ակնկալող խորամանկ հաճոյախոսությամբ: «Անկիրք ու չգարգացած մարդը կարող է եւ չհասկանալ, բայց Դուք, որպես գարգացած անճնակիրություն...», «Բոլորին է հայտնի Ձեր անկողմնակալությունն ու իմաստությունը, ուստի կարծում եմ, Դուք փասնածայներ, որ...»: Այդպիսի դեպքերում, երբ նկատելի է ընդդիմախոսի խորամանկությունը, թեքնու կարելի է համոծանելով զգուշացնել. «Մի փորձեք հաճոյախոսությամբ համաձայնություն շորթել»:

Կատուցողական բնույթի երկխոսությունների ընթացքում պետք է բացատրել նաեւ *թվացյալ «առակությունների» աշխարհումը*, որը հազվադեպ երեւոյթ չէ մերօրյա բանավեճերում: Օրինակ՝ քաղաքական ուժերի մրցակեճում հեշում են հանդիմանություններ. «Ձեր կուսակցությունը տակալին երիտասարդ է ու

